

## 2018 ԹՎԱԿԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՆՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԺԱՆՏԱԽՏ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՇՃԱՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ

#### I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Մանր եղջրավոր կենդանիների ժանտախտ (ՄԵԿԺ) հիվանդությունը վիրուսային ծագման հիվանդություն է, որը նախկինում երբեք մեր հանրապետությունում չի արձանագրվել: ՄԵԿԺ հիվանդության շճահետազոտության իրականացումը կնպաստի պատվաստումների որակի և շճաբանական հետազոտությունների վրա հիմնված հիվանդության հնարավոր ներթափանցման ռիսկերի գնահատմանը, որն էլ հնարավորություն կստեղծի կենդանական ծագման մթերքների ծավալների ավելացմանը, ինչպես նաև արտադրանքի արտահանման ծավալների ավելացմանը, միևնույն ժամանակ կապահովի Հայաստանի Հանրապետության բնակչությանը անվտանգ կենդանական ծագում ունեցող առողջ մթերքով:

#### II. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

2. Ռազմավարական ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) նպատակն է՝ իրականացնել ՄԵԿԺ հիվանդության դեմ պատվաստումների արդյունավետության և շճաբանական հետազոտությունների վրա հիմնված հիվանդության հնարավոր ներթափանցման ռիսկերի գնահատում:

#### III. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3. Վերջին տարիների ընթացքում ՄԵԿԺ-ի բռնկման դեպքեր են արձանագրվել մեզ հարևան Իրանում և Թուրքիայում, իսկ 2016թ.-ին նաև Վրաստանում: Հաշվի առնելով տարածաշրջանում ՄԵԿԺ-ի համաճարակային իրավիճակը մեր հանրապետությունը կարելի է դասել այս հիվանդության ներթափանցման տեսանկյունից բարձր ռիսկային գոտում, ուստի ՄԵԿԺ-ի հիվանդության ներթափանցումը կանխելու նպատակով, հանրապետության բուժֆերային գոտիների (վերոգրյալ երկրների հետ սահմանակից տարածաշրջաններ) մանր եղջրավոր կենդանիների ամբողջ գլխաքանակը պատվաստվել է ՄԵԿԺ հիվանդության դեմ:

4. Ռազմավարությունը բխում է «Անասանբուժության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետի պահանջից:

#### IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

5. Ծրագրի իրականացման ռիսկերն են՝

- 1) համապատասխան հավաքածուների շուկայից ձեռք բերման անհնարինությունը,
- 2) արյան նմուշառման ոչ պատշաճ իրականացումը,

6. Ծրագրի ռիսկերի հաղթահարման հնարավոր ուղիներն են՝

- 1) Ծրագրերի շրջանակներում ձեռք բերվող համապատասխան հավաքածուների շուկայում չլինելու պատճառով ապահովել դրանց ձեռքբերումը անմիջապես արտադրողից,
- 2) իրականացնել արյան կրկնակի նմուշառում, որպեսզի վերջնական արդյունքը հավաստի լինի:

#### V. ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

##### 1. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՇԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

7. Արյան նմուշառման շրջանակում ընդգրկված են Հայաստանի Հանրապետության բոլոր համայնքները, որոնք խմբավորվել են 2 գոտիների՝ բարձր ռիսկային գոտի (Թուրքիայի, Վրաստանի, Ադրբեջանի, Իրանի սահմանամերձ համայնքները) և ցածր ռիսկային գոտի: Որպես բարձր ռիսկային գոտիներ ընտրվելու են այն տարածաշրջանները, որոնք անմիջական սահմանակից են Թուրքիային, Վրաստանին, Ադրբեջանին, Իրանին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը կամ այդ տարածաշրջաններում առկա են սեզոնային արտավայրեր:

8. Հետազոտության մեջ ընդգրկված համայնքները պետք է ունենան 50 գլխից ոչ պակաս, մանր եղջերավոր կենդանի (այսուհետ՝ ՄԵԿ) քանի որ քիչ գլխաքանակի դեպքում համայնքը չի կարող հանդես գալ որպես համաճարակային միավոր:

9. Օգտագործվել են առցանց օրինակելի չափման համաճարակաբանական վերլուծական հետևյալ համակարգերը՝ <http://www.winepi.net> և <http://www.epitools.ausvet.com>: Ելնելով ակնկալվող տարածվածության ցուցանիշից՝ վստահության մակարդակը վերցվել է 95%:

##### 2. ՆՄՈՒՇԱՌՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

10. Նմուշառումը բաղկացած է երկու փուլերից՝

1) Որպես առաջնային նմուշառման միավոր ընդունվում է **Համայնքը**.

ա. Բարձր ռիսկային գոտում հիվանդության սպասվելիք տարածվածությունը հաշվարկվել է 60%, բացարձակ սխալը՝ 10% /հավաստիությունը 95%/: Ըստ կատարված հաշվարկների 93 համայնք /23 տարածաշրջան/ ընդգրկվում են բարձր ռիսկային գոտում:

բ. Ցածր ռիսկային գոտում սպասվելիք տարածվածությունը հաշվարկվել է 30%, բացարձակ սխալը՝ 10% /հավաստիությունը 95%/: Ըստ կատարված հաշվարկների 81 համայնք /17 տարածաշրջան/ ընդգրկվում են ցածր ռիսկային գոտում:

2) Որպես երկրորդային նմուշառման միավոր ընդունվում է **Կենդանին**.

ա. Ըստ ռիսկայնության գոտիներում ընդգրկված ՄԵԿ-ի գլխաքանակի նմուշների քանակը: Բարձր ռիսկային գոտու յուրաքանչյուր համայնքից կազմել է 15 գլուխ և ոչ ռիսկային գոտու յուրաքանչյուր համայնքից 7 գլուխ (հաշվարկները կատարվել են <http://www.epitools.ausvet.com> ծրագրով): Նմուշառումը ապահովում է կենդանիների պատահական ընտրությունը:

11. Փաստացի ընտրանքի չափը 1962 նմուշ՝ համաձայն Աղյուսակ N1-ի:

Աղյուսակ N1

N	բաժանումները ըստ ռիսկայնության	Ընտրված համայնքների քանակը	ՄԵԿ		
			Ակնկալվող տարածվածությունը	Նմուշների քանակը յուր. համայնքից	ամբողջ նմուշներից
1	Բարձր ռիսկային գոտիներ	93	60%	15	1395
2	Ցածր ռիսկային գոտիներ	81	30%	7	567
3	<b>Ընդամենը նմուշները</b>				<b>1962</b>

12. Նմուշների կրկնակի փորձաքննության (կորուստ, ոչ բավարար շիճուկներ, անորակ շիճուկներ, հեմոլիզված շիճուկներ, թեսթի զգայունության հետ կապված սխալներ) համար հաշվարկվում է փաստացի թեսթավորված նմուշների չափը 15%-ով գերազանցող քանակը, որը կազմում է 2200 նմուշ:

### **3.ՆՄՈՒՇԱՌՈՒՄ, ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ, ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

13. Նմուշները և տվյալները հավաքագրվում են գործունեության ընթացքում համայնքային անասնաբույժների կողմից:

14. Եթե ընտրված գյուղը չի համապատասխանում պահանջվող չափանիշներին (օր. ընտրանքի չափը, տեսակը) ընտրվում է աշխարհագրորեն մոտ և նմանատիպ այլ ռիսկային համայնք, որն ունի պահանջվող չափանիշները:

15. Կենդանիներն ընտրվում են պատահական, եթե դա տեսականորեն հնարավոր չէ, ապա ընտրանքը կատարվում է ըստ փաստացի առկա գլխաքանակի:

16. Յուրաքանչյուր անասնատիրոջ կենդանիների խմբից ընտրվում է ոչ ավել քան 3 կենդանի (եթե հնարավոր է): Համայնքը բաժանվում է ըստ հոտերի կամ համայնքում կենդանիների աշխարհագրական բաշխվածության, և նմուշառումը կատարվում է տարբեր խմբերից:

17. Շիճուկ անջատիչ վակուումային փորձանոթները լցվում են ամբողջապես, պատշաճորեն պահվում են և տեղափոխվում լաբորատորիա 48 ժամվա ընթացքում:

18. Բոլոր տվյալները լրացվում են ընթեռնելի, նմուշառման թերթիկում և փորձանոթների վրա:

19. Արյան փորձանոթները պիտակավորվում են նմուշառումից հետո, ջրակայուն մարկերներով:

20. Նմուշների հավաքագրման ձևաթուղթը ներառում է հետևյալ նվազագույն համաճարակաբանական տվյալները.

1) նմուշի համարը.

2) կենդանու գտնվելու վայրը՝ մարզ, տարածաշրջան, համայնք.

3) անասնատիրոջ անունը.

4) տարիքը ամիսներով.

5) ՄԵԿԺ-ի դեմ վերջին պատվաստման ամիսը, պատվաստանյութի տեսակը.

6) արոտավայրերի հեռավորությունը (10 կմ-ից քիչ կամ շատ).

7) նշում՝ առկա է (ե՞րբ) մանր եղջերավորների ժանտախտ հիվանդության կլինիկական դեպքերի մասին:

21. Դաշտային և լաբորատոր բոլոր տվյալները մուտքագրվում են էլեկտրոնային տարբերակով տվյալների վերլուծության համար: Բոլոր թեսթային արդյունքները գրանցվում են դաշտային տվյալների հետ միասին GIS տվյալների բազայում: Տվյալների էլեկտրոնային և թղթային տարբերակները պահպանվում են:

#### **4. ՆՄՈՒՇՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ, ՆՄՈՒՇՆԵՐԻ ԲԱՆԿԸ**

22. Լաբորատորիայում շիճուկները բաժանվում են 2 ծավալով՝ 2 մլ յուրաքանչյուր անոթում:

23. Բոլոր շիճուկային փորձանոթները և պահպանման տուփերը պիտակավորվում են համայնքի և նմուշի համարով:

24. Շճաբանկում լաբորատոր արդյունքների տվյալներից բացի պարունակում է անհրաժեշտ տվյալներ սառնարանում շիճուկի և նրանց տեղի մասին:

25. Շիճուկները պարտադիր պահվում են մինչև ծրագրի ավարտը:

#### **5 . ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԱՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

26. Ծրագրով նախատեսված միջոցառումները և դրանց կատարման ժամկետները համաձայն N2 աղյուսակի:

Աղյուսակ N2

Հ/Հ	Գործողություն	Ժամկետ	Պատասխանատու	Ֆինանսավորում (հազ. դրամ)
1	Մարզի, համայնքի և տնտեսության ընտրություն	2018 թվականի 1-ին եռամսյակ	համայնքային անասնաբույժների կողմից	Ֆինանսավորում չի պահանջվում

2	Կենդանիների ընտրություն (պատահականության սկզբունքով) և նմուշառում	2018 թվականի 2-րդ կիսամյաի 1-ին տասնօրյակ	համայնքային անասնաբույժների կողմից	200.0
3	Նմուշների գրանցում և տեղափոխում լաբորատորիա	2018 թվականի 2-րդ կիսամյանի 1-ին տասնօրյակ	ՀՀ ԳՆ ՍԱՊԾ	740.0
4	Լաբորատոր փորձաքննություն	Նմուշները ստանալուց միջև 1 ամիս	ՀՀ ԳՆ ՍԱՊԾ	14101.75
5	Դաշտային և լաբորատոր տվյալների մուտքագրում GIS տվյալների բազա	Լաբորատոր արդյունքների ստանալուց միջև 1 ամիս	ՀՀ ԳՆ ՍԱՊԾ □ՀԱԲԼԾԿ□ ՊՈԱԿ	Ֆինանսավորում չի պահանջվում
6	Արդյունքների վերլուծություն	2018 թվականի հոկտեմբերի 3-րդ տանօրյակ	ՀՀ ԳՆ ՍԱՊԾ համապատասխան ստորաբաժանումների մասնագետներ	Ֆինանսավորում չի պահանջվում

## VI. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

27. Ծրագրի իրականացման ծախսերը 2018 թվականի համար կազմում է 15 մլն 41 հազ 750. դրամ ըստ միջոցառման՝ մանր եղջերավոր կենդանիների ժանտախտ հիվանդության դեմ պատվաստումների որակի և շճաբանական հետազոտությունների վրա հիմնված հիվանդության հնարավոր ներթափանցման ռիսկերի գնահատում՝ իրականացվելիք 2200 հակամարմինների և հակաձինների շճահետազոտության պլանի կազմում՝ մանր եղջերավոր կենդանիների (այսուհետ՝ ՄԵԿ) հակամարմինների և հակաձինների ուսումնասիրության հիման վրա:

28. Ծրագիրն իրականացվում է յուրաքանչյուր տարի «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ծրագրի գծով սահմանվող միջոցների հաշվին:

## VII. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

29. Ռազմավարության արդյունքային ցուցանիշներն են՝

1) **քանակական՝** իրականացվելիք 2200 հակամարմինների և հակաժինների շճահետազոտության պլանի կազմում՝ մանր եղջերավոր կենդանիների (այսուհետ՝ ՄԵԿ) հակամարմինների և հակաժինների ուսումնասիրության հիման վրա:

2) **որակական՝** մանր եղջերավոր կենդանիների ժանտախտ հիվանդության դեմ պատվաստումների որակի և շճաբանական հետազոտությունների վրա հիմնված հիվանդության հնարավոր ներթափանցման պարզաբանում:

### ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ցուցանիշի անվանումը	Հայաստանի Հանրապետությունում մանր եղջերավոր կենդանիների ժանտախտ հիվանդության շճահետազոտության իրականացում:
Համառոտ նկարագրությունը	Մանր եղջերավոր կենդանիների ժանտախտ հիվանդության նկատմամբ կատարված պատվաստումների արդյունավետության և երկրում հիվանդության շրջանառության ու ներթափանցման ռիսկերի գնահատում՝ իրականացվելիք 2200 հակամարմինների և հակաժինների շճահետազոտության պլանի կազմում՝ մանր եղջերավոր կենդանիների հակամարմինների և հակաժինների ուսումնասիրության հիման վրա:
Նպատակը/ կարևորությունը	Մանր եղջերավոր կենդանիների ժանտախտ հիվանդության շճահետազոտության իրականացումը կնպաստի հանրապետության տարածքում ապահովելու կայուն անասնահամաճարակային իրավիճակ մանր եղջերավոր կենդանիների ժանտախտ հիվանդության նկատմամբ, որն էլ հնարավորություն կստեղծի կենդանական ծագման մթերքների ծավալների ավելացմանը, ինչպես նաև արտադրանքի արտահանման ծավալների ավելացմանը, միևնույն ժամանակ կապահովի Հայաստանի Հանրապետության բնակչությանը անվտանգ կենդանական ծագում ունեցող առողջ մթերքով:
Տեղեկատվության հավաքագրումը/ աղբյուրը	Տեղեկատվությունն ակնկալվում է ստանալ ինչպես մոնիթորինգ իրականացնողներից՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով հաղթող ճանաչված կազմակերպության, այնպես էլ Ծառայության համապատասխան ստորաբաժանումների մասնագետների կողմից կատարվելիք հարցումների ու դիտարկումների արդյունքում: Տեղեկատվությունը հավաքագրվելու և վերլուծվելու է Ծրագրի իրականացման համար

	պատասխանատու ստորաբաժանման կողմից:
Հաշվարկման մեթոդը	Յուրաքանչյուր կենդանատեսակի ընտրանքային չափի տոկոսային հարաբերակցությունը հաշվարկվում է, օրինակ՝ Բարձր ռիսկային գոտում հիվանդության սպասվելիք տարածվածությունը հաշվարկվել է 60%, Յածր ռիսկային գոտում սպասվելիք տարածվածությունը հաշվարկվել է 30%: Ներկայացուցչական ընտրանքի չափը՝ նմուշների ընդհանուր քանակը կազմում է 2200:
Տեղեկատվության սահմանափակումները	Սահմանափակումը գործնականում բացակայում է:
Ցուցանիշի տեսակը	Ցուցանիշը չափում է ծրագրի իրականացման ուղղակի արդյունքը:
Չափման միավորը	հատ նմուշ, նմուշի ծավալը մլ-ով:
Ներկայացման եղանակը	Հետազոտությունների կատարողականները ներկայացվում են կուտակային եղանակով
Հաշվետվողականության ցիկլը	Եռամսյակային և տարեկան
Թույլատրելի շեղումը	Թիրախային մակարդակի համեմատ փաստացի ցուցանիշների մինչև 20 տոկոսային կետով շեղումը համարվում է թույլատրելի, կախված հիվանդության նկատմամբ համաճարակային իրավիճակից, հիվանդության հսկողությունից և հակաժանտախտային պատվաստումների իրականացումից
Պատասխանատվությունը	Ցուցանիշի ձեռք բերման և հաշվետվողականության համար պատասխանատու է ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը (համապատասխան ստորաբաժանումը):

### VIII. ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

30. Ծրագրի արդյունավետ իրականացման համար կարևոր նախապայման է ծրագրի մոնիթորինգի և հաշվետվողականության իրականացումը: Մոնիթորինգի իրականացման համար կստեղծվի աշխատանքային խումբ, որը պարբերաբար կիրականացնի ծրագրի կատարման ընթացքի ուսումնասիրություն: Նմուշառում կատարողները և հետազոտություն իրականացնողները կներկայացնեն պարբերական հաշվետվություններ, որի պարբերականությունը կսահմանի ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը:

31. Մոնիթորինգի և գնահատման ժամանակ անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ փոխկապակցված գործառույթները.

1) գնահատել, թե որքանով են իրականանում ծրագրում նախանշված գործողությունները, բացահայտել ծրագրում նախանշված և իրականացված գործողությունների արդյունքը, ինչպես նաև համեմատել ակնկալվող արդյունքի հետ.

2) բացատրություն տալ չիրականացված գործողությունների համար և որոշել այն քայլերը, որոնք պետք է ձեռնարկվեն այդ գործողությունների իրականացման համար:

32. Մոնիթորինգի և հաշվետվողականության ապահովման նպատակով՝

1) շարունակաբար վերահսկել արյան նմուշների հավաքագրման գործընթացը և որակը, պարբերաբար ստուգել լաբորատորիա ներկայացված նմուշների ուղեկցող փաստաթղթերը.

2) ստուգել ընտրանքի համապատասխանությունը՝ ըստ ներկայացված մեթոդաբանության.

3) լաբորատորիայում պարբերաբար ստուգել ախտորոշման աշխատանքները, լաբորատորիայի արդյունքները, տվյալների գրառումները, պատշաճ նմուշի և շիճուկ բանկի կառավարման աշխատանքները, շիճուկի պահման պայմանները.

4) ապահովել որակյալ տվյալների հաշվառման և տվյալների կառավարման աշխատանքները.

5) ապահովել անմիջական հետադարձ կապ դաշտային նմուշառման թիմի հետ նրանց կատարած աշխատանքների մասով

33. Ռազմավարական ծրագրի իրականացման ժամկետներն են՝

1) ՄԵԿ-ի արյան նմուշառում՝ յուրաքանչյուր տարվա երկրորդ կիսամյակի առաջին տասնօրյակ:

2) արյան նմուշների լաբորատոր շճաբանական հետազոտություն՝ նմուշների ստացման օրվանից մինչև մեկ ամիս:

34. Ռազմավարական ծրագրի ներդրման արդյունքում ակնկալվում են՝

1) ՄԵԿԺ հիվանդության դեմ հականասնահամաճարակային միջոցառման ժամանակին և արդյունավետ իրականացում,

2) հանրապետությունում ՄԵԿԺ հիվանդության նկատմամբ կայուն անասնահամաճարակային իրավիճակի ապահովում և հիվանդության ներթափանցման կանխարգելում: